ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

25.12.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՁՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2020/3>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան <<05>> 02 2020թ.

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մշակույթ>> ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն **Ա. Աբգարյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<Նարեկ Բաբայան Աբրահամի>> Ա/Ձ-ն**, ի դեմս **Ն. Բաբայանի**, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2019թ. կնքված N <<ՁՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2020/3>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացրած 30.01.2020թ. զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 25.12.2019թ. կնքված N <<ՁՀ-ՄՀՈԱԿ-ՄԱԱՊՁԲ-2020/3>> գնման պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի թիվ 7-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի անվանման և տեխնիկական բնութագիր սյունակները շարադրել հետևյալ խմբագրությամբ. համապատասխանաբար՝ <<Յուղ շարժիչի>>, <<Յուղ շարժիչի, ՋԻԼ-130>>:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մշակույթ>> ՀՈԱԿ	**<<Նարեկ Բաբայան Աբրահամի>> Ա/Ձ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	**Չարենցավան համայնք, գյուղ Ալափարս**
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ	**14 փողոց տուն 23**
Հ/Հ 16028448201700	**<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ**
ՀՎՀՀ 03015071	**Հ/Հ 220439820881000**
	ՀՎՀՀ 81306966
Տնօրեն՝ Ա. Աբգարյան	**Ն. Բաբայան**
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	